ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/46

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Աշոտ Նահապետյանի (պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, պետական հաշվառման համար՝ 269.934105)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2019թ. թիվ 26/26-1/7359-2019 գրությամբ Ա/Ձ Աշոտ Նահապետյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 30.04.2019թ. թիվ ԵԱ 095-ել գրության հիման վրա, 03.05.2019թ. թիվ 26/26-1/7359-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Աշոտ Նահապետյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Աշոտ Նահապետյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Աշոտ Նահապետյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Ա/Ձ Աշոտ Նահապետյանը ս/թ ապրիլի 1-ին մասնակցել է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնման ընթացակարգին, և հավաստել է, որ այդ օրվա դրությամբ չունի հարկային պարտավորություններ: Մասնակիցը ՀՀ հարկային օրենսգրքով և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն հաշվարկում և ժամանակին վճարում է հարկերն ու վճարները, ինչը վկայում են նաև հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում առկա տվյալները: Ըստ այդ տվյալների՝ Ա/Ձ Աշոտ Նահապետյանը 01.04.2019թ դրությամբ չի ունեցել հարկային պարտավորություններ:

Ինչ վերաբերում է սոցիալական վճարին, ապա Մասնակիցը 27.03.2019թ. վերաբացելուց հետո էլեկտրոնային համակարգով հարկային պարտավորություններ բաժնի անճշտության պատճառով չի ցուցադրել որևէ հարկային պարտավորություն: Իսկ արդեն 01.04.2019թ. հարցում կատարելով հարկային մարմին պարզ է դառնում, որ առկա են նախկինում վճարված սոցիալական վճարը՝ 5132 (հինգ հազար հարյուր երեսուներկու) դրամ, որը արտացոլված է որպես անցումային գերավճար և 5000 (հինգ հազար) դրամ սոցիալական վճար, որպես չկատարված հարկային պարտավորություն: Ինչը փաստում է, որ հարկային մարմնի կողմից չփոխմարելու պատճառով առաջացել է 5000 (հինգ հազար) դրամ սոցիալական վճարի գծով հարկային պարտավորություն: Այս ամենը փաստում են էլեկտրոնային համակարգում անձնական գրասենյակի վճարումներ բաժնում առկա բոլոր վճարումները և հարկային պարտավորություններ բաժնում ԱՀՔ քաղվածքը:

Ինչ վերաբերում է դրոշմանիշային վճարներին, ապա Կազմակերպությունը որպես հարկային գործակալ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված դրոշմանիշային վճարի գումարը պետական բյուջե է փոխանցում մինչև դրոշմանիշային վճարների չափի հաշվարկման

ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Համաձայն նույն օրենքի 13-րդ հոդվածի՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին, սակայն նման ծանուցումներ Ա/Ձ Աշոտ Նահապետյանը չի ստացել:

Ա/Ձ Աշոտ Նահապետյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/46 ընթացակարգի շրջանակներում 10.05.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.04.2019թ. թիվ ԵԱ 095-ել գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/10» և «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/09» ծածկագրերով հրատապ բաց մրցույթներում Ա/Ձ Աշոտ Նահապետյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով, հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Տրամադրված եզրակացության արդյունքում պարզվել է, որ Մասնակիցը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/46 ընթացակարգի շրջանակներում 10.05.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2019/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2019/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել են «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/10» և «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/09» ծածկագրերով հրատապ բաց մրցույթներ (հետայսու նաև՝ Մրցույթներ), որոնց մասնակցելու նպատակով **<u>01.04.2019թ.</u>** հայտ է ներկայացրել Ա/Ձ Աշոտ Նահապետյանը:

2. Մասնակցի կողմից «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/10» ծածկագրով մրցույթի մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով մի շարք չափաբաժինների մասով ներկայացված առավելագույն գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 25 000 ՀՀ դրամ՝ 76-րդ և 78-րդ չափաբաժինների համար:

3. Մասնակցի կողմից «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/09» ծածկագրով մրցույթի մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով մի շարք չափաբաժինների մասով ներկայացված առավելագույն գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 75 000 ՀՀ դրամ՝ 116-րդ չափաբաժնի համար:

4. Մրցույթների գնահատող հանձնաժողովների 04.04.2019թ. ժամը 13:00-ի և 08.04.2019թ. ժամը 13:00-ի նիստերի թիվ 3 և թիվ 4 արձանագրություններով կայացված որոշմամբ Ա/Ձ Աշոտ Նահապետյանը մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

5. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 44-րդ կետի հիման վրա 09.04.2019թ. և 15.04.2019թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ ***Ա/Ձ Աշոտ Նահապետյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 12 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

6. Մրցույթների գնահատող հանձնաժողովների 12.04.2019թ. ժամը 13:00-ի և 18.04.2019թ. ժամը 13:00-ի նիստերի թիվ 5 և թիվ 6 արձանագրություններով կայացված որոշմամբ Մասնակցի ներկայացրած հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2019թ. թիվ 26/26-1/7359-2019 գրությունը, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 30.04.2019թ. թիվ ԵԱ 095-ել գրությունը և կից փաստաթղթերը, Ա/Ձ Աշոտ Նահապետյանի գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի

միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Պատվիրատուի կողմից «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել են «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/10» և «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/09» ծածկագրերով

հրատապ բաց մրցույթներ, որոնց մասնակցելու նպատակով **01.04.2019թ.** հայտ է ներկայացրել Ա/Ձ Աշոտ Նահապետյանը:

Մասնակցի կողմից «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/10» ծածկագրով մրցույթի մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով մի շարք չափաբաժինների մասով ներկայացված առավելագույն գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 25 000 ՀՀ դրամ՝ 76-րդ և 78-րդ չափաբաժինների համար:

Մասնակցի կողմից «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/09» ծածկագրով մրցույթի մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով մի շարք չափաբաժինների մասով ներկայացված առավելագույն գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 75 000 ՀՀ դրամ՝ 116-րդ չափաբաժնի համար:

Մրցույթների գնահատող հանձնաժողովների 04.04.2019թ. ժամը 13:00-ի և 08.04.2019թ. ժամը 13:00-ի նիստերի թիվ 3 և թիվ 4 արձանագրություններով կայացված որոշմամբ Ա/Ձ Աշոտ Նահապետյանը մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 09.04.2019թ. և 15.04.2019թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ Ա/Ձ Աշոտ Նահապետյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 12 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

Մրցույթների գնահատող հանձնաժողովների 12.04.2019թ. ժամը 13:00-ի և 18.04.2019թ. ժամը 13:00-ի նիստերի թիվ 5 և թիվ 6 արձանագրություններով կայացված որոշմամբ Մասնակցի ներկայացրած հայտը մերժվել է:

Այսպիսով՝ Մասնակիցը մրցույթների մասնակցության հայտերի թիվ 2 հավելվածներով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է մրցույթների հրավերներով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ

օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված Մասնակցի կողմից մի շարք չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսի չեմը:

Միևնույն ժամանակ, արձանագրում եմ, որ Ա/Ձ Աշոտ Նահապետյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2019թ. տրված թիվ 872 տեղեկանքը, համաձայն որի Մասնակիցը 01.04.2019թ. դրությամբ ունեցել է 5 000 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորություն սոցիալական վճարի մասով:

Մասնակիցը ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.05.2019թ. թիվ 874 գրությունը, որով ամրագրվել, որ ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1271-Ն որոշման 4-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ 01.01.2018 թվականից հետո հարկ վճարողի սոցիալական վճարի պարտավորությունները մարվում են միայն միասնական հաշվում առկա գումարների հաշվին: 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարների հաշվին հարկ վճարողի սոցիալական վճարի պարտավորություններ չեն մարվում:

Ուստի 01.01.2018թ. դրությամբ Ա/Ձ Աշոտ Նահապետյանի տարեկան սոցիալական վճարի անձնական հաշվի քարտում առկա 5 000 ՀՀ դրամի գերավճարը հաշվառվել է որպես անցումային գերավճարի մնացորդ և չի մարվել 01.01.2018 թվականից հետո առաջացած տարեկան սոցիալական վճարի 5 000 ՀՀ դրամի պարտավորությունը՝ անկախ այդ նպատակով վճարված լինելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2019թ. տրված թիվ 872 տեղեկանքը և 10.05.2019թ. թիվ 874 գրությունը, գտնում եմ, որ Ա/Ձ Աշոտ Նահապետյանը «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/10» և «ԵՔԵԱ-ՀԲՄԱՊՁԲ-19/09» ծածկագրերով մրցույթների շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության

խախտում, քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2019թ. տրված թիվ 872 տեղեկանքի համաձայն՝ Մասնակցի հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ (01.04.2019թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը կազմել է 5 000 ՀՀ դրամ՝ տարեկան սոցիալական վճարի գծով, որը համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.05.2019թ. թիվ 874 գրության փաստացի վճարված է եղել, որը սակայն հաշվառվել է որպես անցումային գերավճարի մնացորդ և չի մարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2019թ. թիվ 26/26-1/7359-2019 գրությամբ Ա/Ձ Աշոտ Նահապետյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**